«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«12» 08 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ՍՑ-ԳԲԽ-17/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.04.2015թ. թիվ 1/73-1/9429-15 գրությամբ ներկայացված «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02258416) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 16.04.2015թ. թիվ 1/73-1/9429-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝

Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը վերը նշված գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 14.04.2015թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/3139-15 գրության և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

2. «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 20.04.2015թ. թիվ 09/032-892 գրությամբ դիմել է «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ին, սակայն Ընկերությունից պատասխան չի ստացվել:

«Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-17/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը 03.08.2015թ. ժամը 17:00-ին նշանակված հանձնաժողովի նիստին:

«Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ն 05.08.2015թ. Կենտրոնին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Ընկերության նկատմամբ հաշվարկել է 20800 ՀՀ դրամ տուժանք և 1040 ՀՀ դրամ տուգանք, որը 04.08.2015թ. վճարվել է՝ գրությանը կից ներկայացնելով վճարման անդորրագրերի պատճենները:

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.04.2015թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/3139-15 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել, որ «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ի հետ 31.03.2015թ. կնքված «ՇՀԾՁԲ-11/11-15/2-291» ծածկագրով մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել է՝ համաձայն Ընկերության Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված դիմումի՝ կից ներկայացնելով Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը:

Պատվիրատուն «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ին ուղղված 03.04.2015թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/3017-15 գրությամբ հայտնել է, որ պայմանգրով ստանձնած պարտավորությունների չկատարման համար Ընկերության նկատմամբ հաշվարկել է 20800 ՀՀ դրամ տուժանք (պայմանագրի 10%) և 1040 ՀՀ դրամ տուգանք (պայմանագրի գնի 0,5%) և ՀՀ պետական բյուջե Ընկերության կողմից վճարման ենթակա գումարը կազմում է 21840 ՀՀ դրամ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-17/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը 03.08.2015թ. ժամը 17:00-ին նշանակված հանձնաժողովի նիստին:

Պատվիրատուն 13.08.2015թ. էլեկտրոնային եղանակով Կենտրոնին տեղեկացրել է, որ «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ի հետ 31.03.2015թ. կնքված «ՇՀԾՁԲ-11/11-15/2-291» ծածկագրով մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքով Պատվիրատուի կողմից հաշվարկված տուժանքը և տուգանքը Ընկերության կողմից վերականգնվել է՝ կից ներկայացնելով վճարման անդորրագրերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-17/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 16.04.2015թ. թիվ 1/73-1/9429-15 գրությամբ «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԾՁԲ-11/11-15/2-291» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) 2-րդ («Դիմահարդար» մասնագիտությամբ ուսուցում, ք. Երևանում և ք. Վայքում (ուսուցումը կազմակերպվում է ք. Երևանում)) և 4-րդ («Վարսահարդար» մասնագիտությամբ ուսուցում ք. Վայքում (ուսուցումը կազմակերպվում է ք. Երևանում)) չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մարտի 3-ի թիվ 1 որոշմամբ հաստատված Ընթացակարգի հրավերում նշվել է, որ գնի առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել յուրաքանչյուր չափաբաժնի համար ընդհանուր գումարով (չափաբաժնում ընդգրկված անձանց թիվը բազմապատկած մասնակցի կողմից մեկ անձի ուսուցման համար նախատեսվող գնով):

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.03.2015թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 1.2 կետով որոշել է «ՇՀԾՁԲ-11/11-15/2-291» շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 2-րդ և 4-րդ չափաբաժիններով հաղթող ճանաչել «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ին:

4. Ընկերությունն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 19.03.2015թ. գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի 2-րդ և 4-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտով ծառայությունների համար գները ներկայացրել է ոչ թե Պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով, այլ մեկ միավորի համար, ուստի խնդրել է չեղյալ համարել Ընկերության կողմից վերը նշված չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկը:

5. Ի պատասխան Ընկերության 19.03.2015թ. գրության՝ Պատվիրատուն 24.03.2015թ. գրությամբ հայտնել է, որ հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո չի կարող չեղյալ համարել Ընկերության կողմից վերը նշված չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկը:

6. Պատվիրատուի և «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ի միջև 31.03.2015թ. կնքվել է «ՇՀԾՁԲ-11/11-15/2-291» ծածկագրով մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման պայմանագիր:

7. Ընկերությունը 03.04.2015թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ի միջև 31.03.2015թ. կնքվել է «ՇՀԾՁԲ-11/11-15/2-291» ծածկագրով մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման 208000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով պայմանագիր, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը սխալմամբ հայտով ծառայությունների մատուցման գները ներկայացրել է ոչ թե Պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով, այլ մեկ միավորի համար, ինչպես նաև Ընկերության մոտ փոփոխվել են աշխատանքային պայմանները, ուստի խնդրել է Պայմանագիրը միակողմանի լուծել՝ միաժամանակ պարտավորվելով վճարել Պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը:

8. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 13.04.2015թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/3017-15 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ հիմք ընդունելով «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ի 03.04.2015թ. գրությունը, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ Պատվիրատուն տեղեկացրել է Ընկերությանը, որ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու համար անհրաժեշտ է վճարել 20800 ՀՀ դրամ տուժանք (պայմանագրի 10%) և 1040 ՀՀ դրամ տուգանք (պայմանագրի գնի 0,5%):

9. Պայմանգրով ստանձնած պարտավորությունների չկատարման համար «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ի նկատմամբ Պատվիրատուի կողմից հաշվարկված 20800 ՀՀ դրամ տուժանքը և 1040 ՀՀ դրամ տուգանքը Ընկերության կողմից վճարվել են:

5. ՍՑ-ԳԲԽ-17/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.04.2015թ. թիվ 1/73-1/9429-15 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 14.04.2015թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/3139-15 գրությունը, 13.08.2015թ. էլեկտրոնային եղանակով ներկայացրած նամակը և կից փաստաթղթերը, Ընկերության 19.03.2015թ., 03.04.2015թ. և 05.08.2015թ. գրությունները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» այդ պահին գործող կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 149-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է:

Այսպիսով, «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ն «ՇՀԾՁԲ-11/11-15/2-291» ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածի՝ գնման ժամանակացույցի 2-րդ («Դիմահարդար» մասնագիտությամբ ուսուցում, ք. Երևանում և ք. Վայքում (ուսուցումը կազմակերպ-վում է ք. Երևանում)) և 4-րդ («Վարսահարդար» մասնագիտությամբ ուսուցում ք. Վայքում (ուսուցումը կազմակերպվում է ք. Երևանում)) չափաբաժիններով նախատեսված ծառայություններ չմատուցելով՝ Պայմանագրի շրջանակներում **ավելի քան մեկ անգամ** թույլ է տվել պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած վերոհիշյալ պարտավորությունների խախտումը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որի հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքը Ընկերության կողմից մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը վերականգնվել են, ուստի գտնում ենք, որ առկա են հիմքեր «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 16.04.2015թ. թիվ 1/73-1/9429-15 գրությամբ «Ռաիսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02258416) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված վեց ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժ/պ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-17/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան